

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ ժողովրդական հեքիաքների XVIII հատորն ընդգրկում է Մեծ Հայքի Պարսկահայք նահանգի, Արտազ գավառի (Մակո, Արևելյան Վասպուրական), Իրանի Զահարմահալ գավառի և այլ բնակավայրերի հայ ժողովրդական հեքիաքները:

Պարսկահայք աշխարհը տարածվում էր Ուրմիո լճի (Կապուտան) արևմտյան և հյուսիսարևմտյան առափնյա շրջաններում՝ սահմանակցելով Կորճայք և Վասպուրական նահանգներին՝ ընդգրկելով ավելի քան 11 հազար քառ. կմ տարածք: Պարսկահայք է կոչվել Հայատանի՝ 387 թ.-ի բաժանումից հետո, եթե այն միացվեց Սասանյան Պարսկաստանին: Խսկ մինչ այդ՝ Արտաշեսյանների և Արշակունիների թագավորության օրոք, այն կազմում էր Նոր Շիրական բդեշխության հիմնական մասը: Պարսկահայքի հյուսիսային գավառները IX–XI դարերում մտան Վասպուրականի իշխանության (քագավորության) մեջ: Ըստ «Հայոց աշխարհացույցի»՝ Պարսկահայքը բաղկացած էր ինը գավառներից՝ Հեր, Զարևանդ (այժմ՝ Խոյ), Առնա, Զարեհավան, Տամբեր (այժմ՝ Սալմատ, Դիլման, Շարա և նաև Այլի-Կուտիճան (այժմ՝ Բրադստ, Բերդաճոր-Թարգյավառ), Թրաբի գավառ (այժմ՝ Ուրմիա), Մարի գավառ (այժմ՝ Մարգյավառ) և Ովեա-Արիսի (այժմ՝ Ուշնավիե):

Իրանում հայեր եղել են դեռևս Ք. ա. VI դարից¹: Նրանց թիվն աճել է Տիգրան Մեծի (Ք. ա. 95–55 թթ.) օրոք, որը հայ արհեստավորներ ու զինվորականներ է վերաբնակեցրել այդտեղ: Այնուհետև հայերի թիվը Պարսկաստանում ավելացել է բռնագաղթերի հետևանքով: Պատմիչների հաղորդմամբ հայերի առաջին մեծ բռնագաղթը եղել է Ք. ա. III դա-

1 Է. Բաղդասարյան, Համառոտ ակնարկ իրանահայ համայնքի պատմության (հանրագիտարանային ակնարկ), Թեհրան, 2002, էջ 3:

րում: Լենկ թեմուրի ասպատակությունների հետևանքով (14-րդ դար) բազմարիվ հայեր գերավարվել և տարվել են Խորասան: 1604–1605 թվականներին պարսից Շահ Արսա Ի-ի կազմակերպած բռնազարի հետևանքով, որը որակվել է իրուն «Մեծ սուրգուն», ավելի քան 300 հազար հայեր Արևելյան և Արևմտյան Հայաստանից գաղթել են Իրան, ինչի արդյունքում հիմնադրվել է Նոր Ջուղան: Նոր Ջուղա քաղաքը կարճ ժամանակում դարձավ Իրանի առևտրական կենտրոններից մեկը, որի հայ վաճառականները (խոջաները) XVII և XVIII դարերում նպաստեցին Իրանի և Հնդկաստանի, Եվրոպայի, Ասուսատանի առևտրատնտեսական կապերի զարգացմանը: Ի դեպ, սեփական բնօրրանից հայերի բռնի տեղահանությունը մանրամասնորեն նկարագրված է Պարսկաստանի Թավրիզ քաղաքում ծնված, XVII դարի հայ պատմիչ Առաքել Դավիթեցու «Պատմության» մեջ:

Դարեր շարունակ հայերն Իրանում գրադարձել են երկրագործությամբ, արհեստներով, առևտրով: Պարսկաստանի Ուեյ քաղաքը, որտեղ ապրել են հայեր և այլազգի քրիստոնյաներ, մինչև սելջուկյան արշավանքները Արևելքի խոշոր կենտրոններից էր և հայտնի էր «Տիեզերքի վաճառատուն» անվամբ: Իսկ Իրանի հյուսիսային տարանցիկ ճանապարհի վրա գտնվող Թավրիզ (Դավրիժ) քաղաքում XIV–XV դարերում այնքան հայ է բնակվել, որ 1345 թ. գրված հայկական մի ձեռագրի հիշատակարանում Ներսես Գրիշը այն համարում է ոչ միայն պարսիկների, այլև հայերի մայրաքաղաք: XVIII դարում հայ զյուղական բնակչության մեջ տեղաշարժեր են լինում: Նոր Ջուղայի հարակից Լճան և Ալճան շրջանների գյուղական բնակչությունը տեղափոխվում է Իրանի արևմուտքը և հարավ-արևմուտքը՝ Փերիայի, Բորվարիի և Զահարմահալի շրջանները: Առաջանում են հայկական նոր բնակավայրեր:

Հայերը Պարսկաստանում հիմնել են բազմաթիվ եկեղեցիներ, դպրոցներ, մշակութային օջախներ, բարեգործական հաստատություններ, տպարաններ, գրադարձել հասարակական ակտիվ գործունեությամբ: Արտագի Ս. Թաղեի վանքը (ըստ ավանդության՝ հիմնել է Թաղեոս առաքյալը Ք. հ. 66 թվականին), որը գտնվում է Մակու քաղաքից 20 կմ հարավ-արևելք, Իրանի հայկական եկեղեցիներից առանձնանում է իր բազանավոր ուստավայր և սրբատեղի: Իրանի Սալմաստ գավառը տվել է հայ գրականության այնպիսի խոշոր ներկայացուցիչ, ինչպիսին Ռաֆֆին է:

Պահպանելով ազգային դիմագիծն ու սովորույթները՝ իրանահայերը վերցրել են այլէթնիկ մշակութային տարրեր և, որն իր արտահայտությունն է գտել նաև ժողովրդական բանահյուսության մեջ, այդ թվում՝ հեքիաթներում, ինչը հանդիսանում է հայ-պարսկական մշակութային փոխառնչության ուրույն դրստրումներից մեկը:

Իրանահայերի գանգվածային հայրենադարձությունը սկսվել է 1828–1829 թթ.-ից և շարունակական եղել ընդհուպ նախորդ դարի 80-ական թվականները: Ուսու-պարսկական պատերազմից հետո՝ 1828 թ. կնքված Թուրքմենչայի պայմանագրով, երբ Արևելյան Հայաստանի մի մասը միացվեց Ռուսաստանին, մոտ 40–45 հազար հայեր գաղթեցին Ռուսաստանին միացված Արևելյան Հայաստան: Խորհրդային տարիներին սփյուռքահայության մյուս հատվածների հետ ավելի քան 50 հազար հայեր հայրենադարձվեցին Պարսկաստանից: Իրանահայ բանահավաք Ծ. Զարգարյանի հաղորդմամբ վաղ հայրենադարձվածները հաստատվել են Սևան-Հրազդանի բնակավայրերում, Արարատյան դաշտավայրում և Նախիջևանում: 1921–1946 թթ. Պարսկաստանից հայրենադարձվածները բնակեցվեցին Սիսիան-Գորիս-Ղափանում, Արարատյան դաշտում ու Երևանում, 1963–1988 թթ.՝ Կիրովականում, Լենինականում, Սևանում, Հրազդանում, Զարենցավանում, Արովյանում, Երևանում, Մասիսում, Արարատ-Արտաշատում, Դվինում, Վեդիում, Զվարթնոցում, Էջմիածնում, Աշտարակում, Հոկտեմբերյանում և զյուղական վայրերում²:

Հնուց անտի Պարսկաստանում հայերը ստեղծել են էթնոմշակութային շատ արժեքներ, որոնց մի անքակտելի մասն են կազմում ձեռագիր մատյաններն ու ավետարանները: Դրանցից են Շուրջկանի և Շուխունց ավետարանները, որոնք հայտնի են իրքն խնդրակատար, հրաշագործ և ախտահալած, և որոնց առջև այսօր խննարհվելու են գալիս աշխարհի ամենատարբեր ծայրերից ժամանած հայերը:

Իրանահայոց իրաշապատում, կենդանական և իրապատում հեքիաթներում համապատասխանաբար արտացոլված են մեր ժողովրդի հավատալիքները, ծեսերը, կյանքն ու կենցաղը, պատկերացումները, որոնք ի հայտ են գալիս նաև նոր ժամանակների գրառումներում: Դրանք բովանդակային առումով ուշագրավ են և տարբեր ազգագրական շրջան-

2 Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, Ծ. Զարգարյան, Իրան, Իրանահայեր, 1987 թ., բոլորական 29, թ. 6-7:

ներից գրառված հեքիաթների պես դրսնորում են տեղական առանձնահատկություններ:

XX դարում գրառված և տպագրված պարսկահայոց հեքիաթներից հատորում ընդգրկվել են թվով 20-ը՝ Ե. Լալայանի «Մարզարիտներ հայ բանահիւսութեան» Եռահատորյակից 7 հեքիաթ (գիրք Գ, 1914–1915 թթ. Թիֆլիս), Ս. Հայկունու «Էմինեան ազգագրական ժողովածուից»՝ 2-ը (հատոր Բ, 1901 թ., հատոր Դ, 1902 թ., Մուկուա-Վաղարշապատ), Ա. Երեմյանի «Զահարմահալի հայ ժողովրդական բանահիւսութիւն» գրքից՝ 3-ը (1923 թ. Վիեննա), Ա. Արայանի «Սալմաստ» գրքից՝ 7-ը (1906 թ. Նոր-Ջուղա), «Բիրակն» հանդեսից՝ 1-ը: Չնայած տպագիր հեքիաթների այս քանակությանը՝ հատորում մեծ թիվ են կազմում անտիպ հեքիաթները, ինչպես՝ բանահավաքներ Ը. Գրիգորյանի (Ալափարս, 6 հեքիաթ), Գ. Թարվերյանի (Արարատ, Արտաշատ, 4 հեքիաթ), Գ. Ստեփանյանի (Դդմաշեն, Սևանի շրջանի գյուղեր, Զարեննացան, 45 հեքիաթ), Մ. Ավշյանի (Սիսիան, 22 հեքիաթ), Ս. Հարությունյանի (Մալիշկա, 2 հեքիաթ) գրառած հեքիաթները, որոնց բնագրերը պահպում են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում (տպագրված և անտիպ՝ ընդհանուր 99 հեքիաթ):

Այս հատորում ներառվել են նաև Արշակ Արայանի՝ Սալմաստ գավառի տեղագրությանը, ազգագրությանը, հավատալիքներին, տոնածիսական հանալիքին և բանահյուսությանը նվիրված «Սալմաստ» գրքում գետեղված բոլոր հեքիաթները:

«Զահարմահալի հայ ժողովրդական բանահիւսութիւն» գրքի «Հեքիաթներ» բաժնի սկզբում Ա. Երեմյանը խոսում է ընդհանրապես հեքիաթների բնույթի, տեսակների և մասնավորապես Զահարմահալի հեքիաթների մասին և նշում է, որ տեղական հեքիաթներից «Օխտը մուկը», «Պառան ու էծը», «Բուռուկէս» և այլ հեքիաթներ «իրենց կազմվածքով ու բովանդակութեամբ աւելի ինքնուրոյն են, աւելի հարազատ և սոյց են տալիս ժողովրդական շարահարութեան ճարտար հիւսուածք»³:

Հեքիաթները գրառվել են Մակուից, Խոյ-Սալմաստից, Զահարմահալից հայրենիք վերադարձած գաղթականներից, որոնց նախնիները հաստատվել են Սևանի շրջանի Դդմաշեն գյուղում, Սիսիանի Անգեղակոր և հարակից գյուղերում, Արարատում, Հրազդանի շրջանի գյու-

3 Ա. Երեմեան, Զահարմահալի հայ ժողովրդական բանահիւսութիւնը, Վիեննա, 1923, Էջ 40:

դերում, Արովյանում, Չարենցավանում: Ուստի՝ լայն առումով այս հատորը ներկայացնում է ոչ միայն բուն Պարսկահայքի, այլև առհասարակ իրանահայոց հերիարքային ժառանգության մի համահավաք, քանի որ զրի առված հերիարքները պատմել են նաև Իրանի այլ հայաբնակ գավառներից ու գյուղերից Հայաստան ներգաղթած ասացողները:

Սույն հատորում զգալի թիվ են կազմում Գ. Ստեփանյանի և Մ. Ավշյանի գրառած դեռևս անտիպ հերիարքները Դդմաշենից, շրջակա վայրերից և Սիսիանի գյուղերից: Չնայած գրքում տեղ գտած բուն հրաշապատում հերիարքների զգալի քանակությանը՝ Գ. Ստեփանյանի՝ 1950–1960-ական թվականներին գրառած հերիարքներին բնորոշ են հրաշապատումից իրապատում անցումները: Դա հատկապես երևում է այդ հերիարքների՝ հայոց մյուս ազգագրական շրջաններից գրառված տարրերակների գուգադրությամբ:

«Դումյան Գոզանի նադրը», «Կեռքնուկ խանզադեն», «Խորք ախճկա նադրը», «Աստվածատուրը հու չալ կատուն», «Կափոել հրեշտակի նադրը», «Բախտի եղունիկը», «Ծակատակիրը», «Ավշի Բալարեզը», «Ելը պերավ, սելը պերավ», «Ես էլ սրինայ մնալու չի», «Մարալը», «Թըխա փի նադրը», «Ծաղապանի նադրը», «Զորանի ախճիկը», «Հրդեղենն ու հողածինը», «Ալանն ու մուկը», «Թիլիսիմ արած դաստախունը», «Աշկածակ ախճիկը», «Թաքավորն ու նըլարաշին», «Ցաքարին նադրը», «Կատուն, շոնք նան մոկնը» հերիարքները Ա. Նազինյանի հանձնարարությամբ գրառել են Մ. Ավշյանը Պարսկաստանից հայրենադարձ- վածներից՝ Սիսիանի Անգեղակոր, Ախլաքյան և Լոր գյուղերում:

Բարբառի առումով կարևոր է նշել, որ բարբառային միագիծ պատկեր չկա այս ժողովածուի հերիարքների համար: Եկվորների և նրանց սերունդների խոսվածքը ժամանակային և տարածական փոփոխությունների է ենթարկվել: Քանի որ հերիարքները զրի են առնվել տարրեր ժամանակաշրջաններում տարրեր քանահավաքների կողմից և տարրեր վայրերում, հետևաբար՝ ամեն քանասաց դարձել է տեղային խոսվածքի կրողը, իսկ հերիարքները՝ տվյալ շրջանի խոսվածքի արտահայտությունը:

«Համփերբոնը գանձ ի», «Քահվախ Թաքոսի նադրը», «Նախրչին վազիր», «Էրկու դանվուշ» հերիարքները, որոնք գրառվել են Արտաշատի և Արարատի գյուղերում, ներկայացնում են Ռոբիայի (Խոյի) բարբառը: Հարկ է նշել խոյեցիների բարբառի գլխավոր առանձնահատկությունը, այս է՝ սահմանական եղանակի ներկա ժամանակի կազմությունը՝

ս-ով վերջավորվող անկատար դերբայով, օրինակ՝ ասէս էմ, տօղաս էմ (ասում եմ, դողում եմ): Նույն՝ Խոյի բարբառի առանձին խոսվածքներ ներկան կազմում են անորոշ դերբայի հետ նույնացած անկատար դերբայով, օրինակ՝ ասէլ էմ, տօղալ էմ (ասում եմ, դողում եմ) և այլն: Պատմականորեն սահմանակից լինելով Վաճի և Մարաղայի բարբառներին՝ Ուրմիայի (Խոյի) բարբառը հնչյունական համակարգով նման է Վաճի բարբառին, իսկ քերականությամբ՝ Մարաղայի բարբառին⁴:

■ ■ ■

Ինչպես հաղորդում է բանահավաք Գ. Ստեփանյանը, դդմաշենցիների նախնիները 1827-1829 թթ. ոռու-պարսկական և ոռու-բուրբական պատերազմներից հետո իրենց ներկա բնակավայր են տեղափոխվել Մակո քաղաքից և շրջակա գյուղերից:

Քանի որ սույն հատորում Դդմաշենի հեքիաքները զգալի թիվ են կազմում, ուստի ստորև տրվում են տվյալ խոսվածքի առանձնահատկությունները՝ ըստ բանահավաք Գ. Ստեփանյանի, որը ներկայացնում է խոսվածքին բնորոշ լեզվաբանական մի շարք իրողություններ՝ հնչյունի հավելումը, անկումը, տարրեր ժամանակաձևերի դրաւորումները.

1. Դդմաշենի բարբառի յուրահատկություններից մեկն է, որ ձայնավորներից առաջ, բառասկզբում համախակի գործածվում է «հ» հնչյունը՝ հուրիշ, հիշկալ, հերես, Հերևան, հընգեր, հառաչ, հիրան, հառավոտ, հընգա, հորբում, հիմանում, հուրա, հառիք և այլն:

2. Բազմաթիվ դեպքերում՝ ձայնավորներից առաջ, «հ» հնչյունը փոխարինվում է «խ» հնչյունով՝ խայ, խա (հա), խոտաղ, խոր (հոր), խեր (հեր), խէչըթ, խին (հին), խիվանդ, խաստ, խաղորեց, խասկաց, խրեղեն (հրեղեն): Որոշ բառերում բառամիջի «հ»-ն վերածվում է «խ»-ի, օրինակ՝ պախել, օխնել (օրինել) և այլն:

3. Բայի անցյալի անկատարը՝ կգնայի, կառնեի, կրերեի, կուտեի (պայմանական եղանակ), արտասանվում է կերի, կառնի, կրերի, կուտի և այլն:

4. Հարակատար դերբայը՝ բերած, մաքրած, կերած, դրած, փորած, արտասանվում է՝ բերուկ, մաքրուկ, ճերուկ, դրուկ, փորուկ:

5. Ըղձական եղանակի «ի» վերջավորությունը արտասանվում է

4 Հիմք ենք ընդունում լեզվաբան Մ. Ասատրյանի «Ուրմիայի (Խոյի) բարբառը» ուսումնասիրությունը, որի համաձայն՝ «Ուրմիայի և Խոյի բարբառ» եզրույթները նոյն նշանակությունն ունեն:

«ա» հնչյունով, օրինակ՝ բերի, ուտի, երգի, պարի, խոսի, լսի, ասվում է՝ բերա, ուտա, երգա, պարա, խոսա, լսա և այլն:

6. Անյալ կատարյալը ցույց տվող բայաձևի «ց» հնչյունը փոխարինվում է «վ» հնչյունով, օրինակ՝ ասաց, ծնեց, սատկեց, փտեց, կիհնի՝ ասավ, ծնավ, սատկավ, փտավ և այլն:

7. «Հ» հնչյունը դուրս է ընկնում եսոն (հետո), եռացնել (հեռացնել):

8. «Մ» հնչյունից հետո ավելանում է «ք», օրինակ՝ համրել, թմրել — խամբրել, թմբրել:

■ ■ ■

Պարսկահայոց այս հատորը կազմված է հայ ժողովրդական հեքիաքների ակադեմիական իրատարակության ընդունված սկզբունքներով: Գրքում նախապես դրվել են բանասացների պատճած հրաշապատում հեքիաքները, ապա՝ իրապատումները, վերջում՝ նաև կենդանական հեքիաքները, որոնք խմբագրական միջամտության և փոփոխության շեն ենթարկվել: Հեքիաքների բնագրերը տրված են ժամանակակից ուղղագրությամբ և կետադրությամբ: Քանի որ հեքիաքները տարբեր բանահավաքների կողմից են գրառվել տարբեր ժամանակաշրջաններում, ուստի միօրինակ դարձնելու նպատակով բոլոր հեքիաքների բնագրերը ներկայացվել են մեկ միասնական ուղղագրությամբ:

Բայց հեքիաքների բնագրերից՝ հատորն ունի նաև՝

- Առաջարան, որտեղ ներկայացվում է պարսկահայոց հեքիաքների սույն հատորի մասին:
- Ծանոթագրություններ, որտեղ հնարավորինս տեղեկություններ են հաղորդվում հատորի հեքիաքների գրառման հանգամանքների մասին:
- Բառարան, որտեղ ընդգրկված են հեքիաքներում հանդիպող բարբառային ու փոխառյալ դժվարըմբոնելի բառերի իմաստներն ու նշանակությունները:
- Հատուկ անունների ցանկեր, որոնցում առանձնացված են հեքիաքներում հանդիպող անձնանունները՝ հեքիաքների հերոսների ու կենդանիների անունները, մակդիմները, ինչպես նաև տեղանունները՝ պատճական և առասպելական աշխարհներին տրվող անվանումները:
- Առարկայական ցանկ, որում տրվում են հեքիաքների բնագրային բոլոր գոյականները, գունանուն ածականները (սև, սպի-

տակ, կարմիր), խորհրդանիշ հանդիսացող թվականները (Երեք, յոթ, ինը, քառասուն):

Հասող և հասարակ անունների յանկերը դասավորված են այբ-քենական կարգով, արաբական թվանշաններով նշվում են այն էջերը, որտեղ գործածված են դրանք:

- Հեքիաքների յանկ, որտեղ որոշակի կարգով աղյուսակում ներկայացված են այս հատորում տեղ գտած բոլորը հեքիաքները՝ ըստ տեղավայրերի, բանասացների և բանահավաքների:
- Հավելված I, որտեղ ներկայացված է «Էրկու դաշտուց» հեքիաքը Խոյի բարբառի գիտական տառադարձությամբ:
- Հավելված II, որում ներկայացված են սույն ժողովածուում տեղ գտած հեքիաքների երկու բանահավաքների՝ Գ. Ստեփանյանի և Մ. Ավշանի կենսագրությունները:

Հատորում կիրառված հապավումներն ու համառոտագրությունները հետևյալներն են՝

Ծ.Ա. - ծանոթություն ասացողի:

Ծ.Բ. - ծանոթություն բանահավաքի:

Ծ.Կ. - ծանոթություն կազմողի: